հանդապետի, որ իւր բարեսրտութեամբը կ'օգնէ այսպիսի մարդասիրական գործոց։

Մնաց՝ Վ. Ալբրամեան Սմբատեանց։

Մ. ՑԱԿՈՐ ՄԱՀՏԵՍԻ ԵՍԱՅԵԱՆ ,

Հրամանաւ և Հայրապետական Կոնդակաւ Վ. Հ. Կաթողիկոսի՝ Մայր Աթոռոյս՝ Օմիւռնիոյ և վիճակաց մէջ ունեցած կալուածոց վերայ Վերատեսուչ կարգեցաւ Մեծ. Պ. Մահտեսի Յակոբ Մ. Նասյեան։

Այս առթիւ կարևոր կը համարիմք յարակցել, զի Օմիւռնիոյ Ազգայինք 'ի նախնեաց հետէ բազում և ազգի ազգի նուիրաբերութեամբք իւրեանց ջերմեռանդին սրտից և հոգեսէր զգացմանց հաւատիքը փառաւոր հանդիսացուցած են առ Մայր Աթոռս Ս. Էջմիածին. անտարակոյս եմք՝ զի տեղւոյն Գեր. Սրբազան Առաջնորդ Հայրը և Ազնուամեծար Իշխանք և թէ առ հասարակ ջերմեռանդ և բարեպաշտ ժողովուրդք՝ այսուհետև իսկ ըստ հարազատ նմանութեան հարցն իւրեանց՝ ինքեանք ևս աջակցելով ընդ նորընտիր Վերատեսչի՝ քաղցր պարտաւորութեամբք պիտի ջանան արդիւնաւորել Ս. Աթոռոյս անդ 'ի Օմիւռնիա ունեցած կալուածները. որով և մեծապէս ուներն նպաստել աստ 'ի Ս. Էջմիածին զանազան ազգօգուտ հաստատութեանց ներկայ և ապագայ արդիւնաւէտ և բաղմաշահ յառաջադիմութեանց, որք արդարև դրամական մեծ նպաստներու կարօտութիւն ունին, որոց ըստ նիւթականին և ըստ բարոյականին օգնել և սատարել ամենայն ճշմարիտ Հայորերոյ սրբազան և անհրաժեշտ պարտքն է։

Վ. Հ. Կաթողիկոսի վերադարձի և Ընուան տօնախմբութեան առիթներով ընթերցեալ ճառերն են, զորս անցեալ ամսագրով խոստացանք հրատարակել։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՏԷՐ

Հ. Նորհաւոր Գարդ և Տօնախմբութեան Մեծի Վահանայապ՝ գէր։

Այսօր յեթերաձեմն արփի զոգցես յեղաշրջեալ նոր շրջան առնու, վասնզի ծագէ մեզ օր նորապայծառ և աւետէ ժամ ուրախազարդ. յորում զյոգնաշխատ զՀայրապետդ վերադարձեալ 'ի Տրփիսպ 'ի գահս Լուսաւորչեան տեսանեմք. այսօր և լուսածին Մայրս մեր Կաթուղիկէ սուրբ Էջմիածին լցեալ հոգեղուարձ խնդութեամբ բերկրի որդւովքն հանդերձ. այսօր լուսաթև հրեշտակ Հայոցս կանգնեալ 'ի կատար Մասեաց հնչեցուցանէ 'ի Հայաստան զարձագանգս ուրախաշարժ. այսօր ընդ օտար աշխարհ ցրուեալ որդիքն Հայոց՝ ցընծալով 'ի սիրտ և 'ի հոգի և աստ սլացեալ մտօք տօնախմբեն ընդ մեզ զանուանակոչութիւն գերազգեն յաջորդիդ զարաւոր պետութեան ազգիս ըստ հոգւոյ. այսօր լերինք ընդ բլուրս խոնարհեալ միահաւասար ցնծան ընդ փառս ազգիս. այսօր Հայկազանցս փառաց հոչակ ընդ ամենայն տեղիս թող հնչեսցի. այսօր նաև բնութիւնն ինքնին հրաւիրէ մեզ յուրախութիւն՝ զի մարդկայինս ընութեան է սովորութիւն ուրախանալ ընդ 'ի հեռուստ դարձ բարեկամին։ Ապա այսօր ոգեպիսի ուրախութիւն, ոգեպիսի խնդութիւն և ոգեպիսի բերկրանք՝ ոչ զգան սիրտք մեր ընդ Դարձ ազգասէր և գթառատ Հօրդ յԱթոռս՝ և ընդ Տօնախմբութիւն վեհափայլ Անուան Զերոյ, և այս կրկնակի խնդութեանցս հանդէսք՝ ոչ այնչափ ուրախացուցանեն զսիրտս մեր՝ որչափ ազգասիրական գործք Ձեր շքեղացուցանելով զաւուրս յիշատակ՝ յորոմն 'ի սիրտ մեր ուրախութիւնք բերկրապատար. և ոչ այնչափ խնդութիւնքն վաղանցուկ հրաւիրեն մեզ յայս հանդէս հոգևոր՝ որչափ քաղցրագութի սէր Ձեր՝ յուրախութիւն սիրահամրոյր. զի սէր զոլով անմահ արդարև անմահ առնէ և գլխաստակ իւր. վասնորոյ է մեզ այսօր օր խնկելի և փառք նախանձելի, յորում ստիպիմք հայրենասէր վառ և բորբոք սիրով հրճուիլ ընդ շնորհափայլ Դարձ և Տօնախմբութիւն Աստուածապատիւ Հօրդ. զի զի՞նչ զոյ պղ ևս Հայկաղեանս տարաբաղդ ազգի 'ի նախկին իւրոյ ճոխութեանց՝ եթէ ոչ սոսկ գահս

Հայրապետականդ իշխանութեան. ապա մեզ ընդ այդ՝ որպիսի սէր, և որպիսի հարազատութիւն պարտ է ունել, այո՛ քան զչափն առաւել, նա մանաւանդ որոյ գաղափար զՍտուածընտիր զՀայրդ տեսանեմք, 'ի Դաշս Քահանայապետական՝ յոր ամփոփեալ են ցաւք բազմազան. ճշմարիտ ասաց՝ և որ ասաց, Վ.իշտք և տխրերանդ անձկութիւնք համբարձեալ զնան բազմին ընդ իշխանացելոյն իսկ յՍթոռն։ Բայց Դուք զամենայն առեալ եդեալ ունիք մեկուսի, անձնանուէր և մեծաւ ճըգամբ անխոնջ աշխատիք 'ի լուսաւորութիւն ազգիս, և 'ի պայծառութիւն հայրենեացս. վասն զի թէ 'ի ներկայ լինելն Ձեր աստ, և թէ 'ի բացակայ, ջանք Ձեր էին երջանկացուցանել զկեանս բոլորեցունց, որ և այժմ 'ի նոյն ոգենիք։ Արդարև ծընունդ երկանց մօրաց ընտրեալ Գլխոյդ՝ անգիտելի է մեզ, բայց գործարրութիւնք նորին ակն յանդիման տեսանեն. զի աՀա նորոգեալ բարեկարգէք զեկեղեցիս, կառուցանէք զուսումնարանս, յաւելուլ ջանայք զթիւս ականաւոր անձանց, պատուէք զուսումնականս, խնամս տանիք տկարաց, հոգայք զկարևոր պիտոյս նորահաստատ ուսումնարանաց, և միշտ խորհիք զապահովութիւն և զերջանկութիւն ապագային ազգիս. որոյ վասն երախտագէտ Հայկազեանն որեարք՝ թող երգեսցեն Ձեզ յաւկեանիցն 'ի զրուատ զերգս վայելուչս։ ԱՀա, երանի զարուս՝ որ ունի զհոգեհանճար զՀայրապետդ յաջորդ մեծին Գրիգորի Պարթևայնին. Երանի ազգիս՝ որ առ Հայրապետութեամբ Ձերով ունի վայելել և զերջանկութիւն. Երանի Եկեղեցեաց՝ որ յաւուրս Ձեր զՍահակեան, զՄեսրովբեան և ըզՆերսիսեանց երանաւէտ զարուն տեսանեն զբարեզարդութիւն. Երանի Մանկանց՝ որ շնորհիւ Ձերով ունին ճաշակել զկատարեալն ուսումն. Երանի և Ուսումնարանաց որ յաւուրս Ձեր ճոխանան ուսմամբք։ Ստուգիւ մեծապանծ գործք Վ.եհ Օծութեանդ կանգնեն 'ի Հայաստան զկոթող փառաց խղճալի ազգիս։ Ապա և մեք, որ այսօր համախմբեալ գրուատեմք զքաջարթուն Հովուապետիդ մեծագործութիւնս, չե՛ն կեղծիկ փաղաքշական, այլ սէր ճշմարիտ, հարազատութիւն՝ որդիական, և խնդութիւն՝ հոգևոր։ Զի որպէս 'ի մեծահանդէս մտից Յիսուսի յԵրուսաղէմ՝ եթէ ծերք և տղայք ըղէին զբարերանութիւնս ովսաննայից, անշուշտ քարինք նաև հրեշտակք իջեալ յերկնից՝ հռչակէին զփառս նորա. Նոյնպէս և մեք եթէ այսօր ներբողական գրուատիւք չյայտնէաք զուրախութիւն սրտից մերոց, բաւական են ներբողենիք գերահռչակ գործք Ձեր՝ և ս և աշխատութիւն Նորակառոյց չքնաղակերտ Ճեմարանիս՝ որում զակն պիշ ունին Հայրենիք մեր յուսումնապիտութիւն մանկանց 'ի մխիթարութիւն փառաւորոյս Հայաստանի, և որոյ գրուատիք ո՛չ այժմ և եթ՝ այլ և որդւոց յորդիս ձառեսցի. Ըր ազազաւ և մեր ուրախանալով ընդ բարեկաջող Դարձ և ընդ մեծափառ Տօնախմբութիւն Ձեր՝ համախմբեալ մատուցանեմք զլիալիր գոհունակութիւն սրտից մերոց՝ Հօրդ բարերարի։ Եւ վասն մեծի Քահանայապետութեանդ՝ մաղթեմք յերկնուստ՝ բիւրեակ երանութեանցն պարգևատրութիւն, 'ի տրիտուր անխոնջ աշխատանացդ. և զի՛ որպէս և այժմ՝ ո՛չ իշխանութեամբ, այլ քաղցր խնամատարութեամբ իշխէք մեզ, նոյնպէս միշտ և յաւէտ զերապանծ բարեկարգութեամբ Ձերով իշխեսջիք սրտից մերոց. ամէն։

Գրիգոր Ուրարակիր Մատթէոսեան։

ԱՌԱՔԵԼԱՊԱՏԻՒ Վ.ԵՀ ՀԱՅՐԱՊԵ՛Տ

Քրիստոսապսակ Մայրս մեր Ս. Էջմիածին ըստ հնոյ սովորութեան և ծիսից Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ յիրաւի այսօր ևս տօնէ սերկեան տօնս քաղցրաձայնութեամբ յատկեղ երգոց շարականաց. սակայն բա՜բէ, միթէ՞ որպէս յառաջն եռամեայ միջոցաւ Հայք անտարբեր, և ուրախալի օրս այս մեզ աննշան 'ի տարեկանացն։ Հայկազանց՝ ո՞չ արդեօք այսօր է յՍստուածահայր Մարգարէէն ուրախութեան և ցընծութեան համբաւեալ իսկ օր։ Եւ աՀա սիրտք մեր խորագոյն իմն ազգեն 'ի մեզ այսօր նոր առիթ խնդի անհամեմատ՝ որոց տեսին խանձարրապատ հնացեալ աւուրքն աննշանք. զի զի՛նչ նոր եւք վարդամատն արփենւոյն համակ ոսկեձեղուն նկարէ հիւսկէն զերկին կապուտակ, 'ի նոյն տիպ, և յաւէտ քան զայն հրաշացուցանէ և զայս աւուրբս տօն համանուանակցի Քոյոյ խաչաղէն նահատակին Քրիստոսի՝ Հայկեան զարմից ընտրեալ բարբոյական Գլխոյդ գերփառունակ այս տօնահանդէս։

Յայս կացուրդ հանդիսիս հանուրց տենչալեաց՝ տեսցեն հապա բիւրք յընդհանուրս քաղցրահայեաց աչաց մեծի Հօրդ, թէ ո՛րպէս խնդին յակումբ խումբք Հայորերոյն. սակայն քաւ, մի՛ ումեք կարծել, որպէս 'ի խաղսն յՕլիմպիա, կամ թատերաց թէ յիղձ գան։ Սոքա ծնողասէր անխարդախ կաթինդ սնունդք սիրական՝ զերախտագիտաց սրտի վերաբերեալ 'ի զիտակին պարգեն նշան զրօշ ի զրօշ։ Ասանիկ աստ օթանան շուք մեծարանք երախտաւորիդ առաջի. աստ բանին ծրարք անհամեմատ սիրոյ. աստ բոլիձայք կընդրկանուէր մեր մաղթանաց նաւն զեթեր բոյր 'ի բոյր։

Վ.եհափա՛ռ Տէ՛ր՝ նաև զեղուն Ազգութեան միրոյ որ ընդ կորստական ալիս Ակկիանու, ընդ խաւար տգիտութեան բռնազբօսեալ մոլորիւր ցարդ քնէած զեկավարացն անհոգութեամբ. ուր ուրեմն հմտագոյն նաւուղղիդ յանձն եղեալ 'ի վերուստ՝ 'ի լաւագոյն անդր արդէն զեկիզըն առնու բարենպաստ ընթացից. զի յոյս 'ի խաւարի նստելոց ծագեցար՝ Արփիդ եթերաձեմ, և հնարաւոր եւք յանել Լաբիւրինթոսն մոլորեաց՝ որդւոց Մօր Հայաստանի ցուցար անկներև։